



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

01.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/47

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝
ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական
համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ՝

Ռ. Եգանյանի (լիազորագիր, տրված՝ 04.07.2019թ.)

քննելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների
ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից
01.07.2019թ. ներկայացված (02.07.2019թ. վարույթ ընդունված) բողոքը որպես ՀՀ
ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ
(հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/47 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 01.07.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սույն թվականի մայիսի 22-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավեր: Հրավերով սահմանվում է՝ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 8-րդ օրը ժամը 10:00-ին՝ մայիսի 30-ին ժամը 10:00-ին:

Հայտերի բացումը տեղի է ունեցել սահմանված կարգով, ինչից հետո Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից առ 30 մայիսի, 2019թ., ժ. 10:00, կազմվել է N2 արձանագրությունը: Այս փաստաթղթով արձանագրվել է, որ գնման առարկա հանդիսացող 1-ին չափաբաժնով նախատեսված հիվանդների կարդիոմոնիտորինգային համակարգի համար գնային առաջարկ են ներկայացրել երկու կազմակերպություն՝ «Մեդիտեք» ՍՊ Ընկերությունն ու «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ Ընկերությունը: Արձանագրվել է նաև, որ մասնակիցների հայտերը ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան: Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի համար սահմանված նախահաշվարկային գումարի գերազանցում տեղի չի ունեցել: Նույն գնանշման հարցման հրավերի գնման առարկա հանդիսացող N6 և N7 չափաբաժինների մասով ներկայացված բոլոր գնառաջարկները գերազանցել են այդ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ըստ այդմ նույն արձանագրությամբ որոշում է կայացվել կասեցնել նիստը և գները նվազեցնելու նպատակով հրավիրել միաժամանակյա գնային բանակցություններ, որոնք կայացել են սույն թվականի հունիսի 5-ին:

Տեղի ունեցած բանակցություններից հետո սահմանված կարգով վերսկսվել է նիստը և կազմվել է N3 արձանագրությունը, ըստ որի՝ 1-ին չափաբաժնով նախատեսված

հիվանդների կարգի մոնիտորինգային համակարգ գնման առարկայի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը: Պատվիրատուի կողմից «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը սահմանված կարգով ծանուցվել է հետորակավորման փաստաթղթերի ներկայացման պահանջի ու վերջնաժամկետի մասին:

Այնուհետև, սույն թվականի հունիսի 19-ին տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի հերթական նիստը, ինչի արդյունքում կազմվել է N4 արձանագրությունը, ըստ որի՝ «Մեդիտեք» ՍՊ ընկերության կողմից 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկայի ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ և ՀՀ Կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 47-րդ կետի համաձայն, այն է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, «Մեդիտեք» ՍՊ ընկերությանն առաջարկվել է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտնաբերված անհամապատասխանությունները:

Սույն թվականի հունիսի 24-ին տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի հերթական նիստը, որի արդյունքում կազմվել է N5 արձանագրությունը, ըստ որի՝ «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրում հայտնաբերված առարկությունները և ճանաչվում է հաղթող մասնակից այդ մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի համաձայն, հրավերով սահմանվել են գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը, այդ թվում նաև վերոնշյալ գնանշման հարցման հրավերի

գնման առարկա հանդիսացող 1-ին չափաբաժնով նախատեսված հիվանդների կարդիոմոնիտորինգային համակարգի տեխնիկական բնութագրերը:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 25.06.2019թ. խնդրել է Պատվիրատուին տրամադրել գնանշման հարցման հրավերի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկա հանդիսացող հիվանդների կարդիոմոնիտորինգային համակարգի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթերը, ինչին ի պատասխան, գնահատող

հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի հունիսի 26-ին «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությանն են տրամադրվել «Մեդիտեք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված սկզբնական և շտկված փաստաթղթերը:

Այդ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունը հայտնաբերել է տեխնիկական բնութագրերում առկա մի քանի անհամապատասխանություններ, որոնք, ըստ էության, չեն շտկվել մասնակցի կողմից:
Դրանք են՝

N:	Հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրիչ	Մասնակցի կողմից սկզբնական տարբերակում ներկայացված տեխնիկական բնութագրիչ	Մասնակցի կողմից շտկված տարբերակում ներկայացված տեխնիկական բնութագրիչ և մասնակցի մեկնաբանություն	Մեկնաբանություն
2	Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ ԷՍԳ (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP, CO2 CF	Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ ԷՍԳ (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP, CO2 CF	CO2 - BF CO2 BF է, քանի որ համապատասխանում է հակաէլեկտրոշոկային անվտանգության պահանջներին: CO2 չափումը որևէ կերպ չի առնչվում սրտի հետ:	Շտկումը պահանջվել էր, հաշվի առնելով, որ ներկայացված բնութագրիչի և սարքի տեխ.անձնագրում նշված բնութագրիչի միջև անհամապատասխանություն կար: Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված
4	Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝ ~ 5MΩ	Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝ > 5MΩ	Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝ > 5MΩ Տվյալ պարամետրի արժեքը կախված է էլեկտրոդների վրա եղած շեղումներից ±300mV և բոլոր դեպքերում չպետք է պակաս լինի 5 MΩ-ից: Ստանդարտների պահանջը սա է:	Փաստացի, չի ճշգրտվել Բացի այդ, մասնակիցն այստեղ հղում է տալիս ±300mV էլեկտրոդների շեղմանը, չնայած որ, այս բնութագիրը մասնակցի կողմից ներկայացված բնութագրով ոչ թե 300, այլ ±500mV է

5	Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ ±300mV	Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ ±500mV	500mV Ձեռնարկում նշված արժեքը վերաբերում է բազային գծից շեղումը, որը կարող է լինել ±	Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված
8	Հիմնական իմպեդանսի տիրույթ՝ 0.1 ~ 2.5 kΩ	Հիմնական իմպեդանսի տիրույթ՝ 0.2 ~ 2.5 kΩ	Հիմնական իմպեդանսի տիրույթ՝ 0.2 ~ 2.5 kΩ 0.2 ~ 2.5 kΩ նշված է 1 kΩ դիմադրություն ունեցող ԷՍԳ մալուխ օգտագործելու դեպքի համար	Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված
9	Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝ 1,2,3,4,5,10,15,30, 60,90,120,180,240 ,480,760 Min	Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝ 1,2,2.5,3,5,10,15,30,60,90, 120,180,240,480 Min	Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝ 1,2,2.5,3,5,10,15,30,60,90,1 20,180,240,480 Min	Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված
10	Նեոնատալ ռեժիմում՝ SYS: 40 ~135mmHg DIA: 10~100mmHg MEAN: 20~110mmHg	Նեոնատալ ռեժիմում՝ SYS: 25 ~145mmHg DIA: 10~115mmHg MEAN: 15~125mmHg	Նեոնատալ ռեժիմում՝ SYS: 25 ~145mmHg DIA: 10~115mmHg MEAN: 15~125mmHg Ռեժիմները համարժեք ենք համարում	Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված
12	Հստակություն՝ ± 2 bpm	Հստակություն՝ ± 3 bpm	Հստակություն՝ ± 3 bpm Համապատասխանում է պահանջին	Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված
15	Մակնշում՝ ART, PA0000CVP, RAP, LAP, ICP, P1, P2	Մակնշում՝ ART	Մակնշում՝ ART Պահանջում նշված չէ բոլոր թվարկած մակնշումների միաժամանակ բավարարելը: Ընդհանրապես օգտվում են նրանցից որևէ մեկից, քանի որ համարժեք են և համապատասխանում են միջազգային ստանդարտներին:	Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված Բացի այդ, եթե մակնշումներից միայն ART-ն է առկա սարքի մոտ, ապա ինչպե՞ս է մասնակիցը տալիս այլ մակնշումների վերաբերյալ տեխնիկական

				բնութագրիչների ոչ միայն առկայության, այլև համապատասխանության մասին տեղեկություններ այլ տողերով:
16	Չափման և ահազանգման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ ART: - 50~350mmHg	Չափման և ահազանգման տիրույթը՝ ART: -50~300mmHg	Չափման և ահազանգման տիրույթը՝ ART: -50~300mmHg Ահազանգման տիրույթը նշվածն է	Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված
21	Կողմնային հոսքի ուշացման ժամանակը ոչ ավել, քան՝ 2~3վրկ	Կողմնային հոսքի ուշացման շամանակը՝ 5,5 վրկ	Կողմնային հոսքի ուշացման շամանակը՝ 5,5 վրկ	Փաստացի անհամապատասխանություն պահանջվող տեխնիկական բնութագրիչի հետ, չշտկված

Գնահատող հանձնաժողովի կողմից այս նկարագրի հիման վրա անհամապատասխանությունների՝ շտկված գնահատելը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված հայտերի գնահատման կարգին, ինչպես նաև՝ գնանշման հարցման հրավերի 7-րդ գլխի 7.2 կետին, այն է՝

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը վկայակոչել է նաև Կարգի 47-րդ և 48-րդ կետերը:

Ըստ այդմ, գնահատման գործընթացի՝ սահմանված կարգերից շեղումն ավելի ակնհայտ է դառնում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն գնահատման հարցման հրավերի N 2 և N 3 չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների մասով հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը նույնատիպ շտկումներ է կատարել, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են ոչ բավարար, և «Մեդիտեք» ՍՊ ընկերության հայտն այս ապրանքների մասով մերժվել է:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնահատող հանձնաժողովին՝ չեղարկել սույն թվականի հունիսի 24-ին կայացած «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված և N5 արձանագրությամբ հաստատված՝ 1-ին չափաբաժնի մասով «Մեդիտեք» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու որոշումը և հետորակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջ առաջադրել (ներկայացնել) հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 04.07.2019թ. դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով առանց քննության թողնել ԳԲԲԱ-ՆԳ-2019/47 բողոքը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 22-րդ կետը՝ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը համարվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 08.07.2019թ. թիվ 09/794 գրությամբ հայտնել է հետևյալը.

1. «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հայտերի ներկայացման վերջնաժամկետ, հայտերի բացում՝ 30.05.2019թ.:

2. «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնման և բողոքի առարկա է հանդիսանում՝

Ձ/հ	Չափաբաժնի անվանումը
1	Հիվանդների կարդիոմոնիտորինգային համակարգ

3. «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները ըստ չափաբաժինների՝

Զ/հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների կողմից առաջարկված գները (<< դրամ), ընդ որում՝		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ	13800000 /տասներեք միլիոն ութ հարյուր հազար/	0 /զրո/	13800000 /տասներեք միլիոն ութ հարյուր հազար/
2	«Մեդիտեք» ՍՊԸ	13303500 /տասներեք միլիոն երեք հարյուր երեք հազար հինգ հարյուր/	0 /զրո/	13303500 /տասներեք միլիոն երեք հարյուր երեք հազար հինգ հարյուր/

4. «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնման առարկա հանդիսացող և բողոքի առարկա չհանդիսացող, սակայն սույն բողոքի շրջանակներում էական նշանակություն ունեցող չափաբաժինների անվանումներ՝

Զ/հ	Չափաբաժնի անվանումը
2	Պերֆուգիոն պոմպ
3	Կապնոգրաֆիայի մոնիտոր

5. «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները ըստ չափաբաժինների՝

Զ/հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների կողմից առաջարկված գները (<< դրամ), ընդ որում՝		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<Մեդիտեք>> ՍՊԸ	2100000 /երկու միլիոն հարյուր հազար/	0 /զրո/	2100000 /երկու միլիոն հարյուր հազար/
	<<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ	5400000 /հինգ միլիոն չորս հարյուր հազար/	0 /զրո/	5400000 /հինգ միլիոն չորս հարյուր հազար/
	<<Մարգ-Ֆարմացիա>> ՍՊԸ	5880000 /հինգ միլիոն ութ հարյուր ութսուն	0 /զրո/	5880000 /հինգ միլիոն ութ հարյուր ութսուն

		հազար/		հազար/
2	<<Մեդիտեք>> ՍՊԸ	1200000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/	0 /զրո/	1200000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/
	<<Խաչապար>> ՍՊԸ	1700000 /մեկ միլիոն յոթ հարյուր հազար/	0 /զրո/	1700000 /մեկ միլիոն յոթ հարյուր հազար/
	<<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ	2180000 /երկու միլիոն հարյուր ութսուն հազար/	0 /զրո/	2180000 /երկու միլիոն հարյուր ութսուն հազար/
	<<Փինկ Ֆլամինգո Գ և Ա կենտրոն>> ՍՊԸ	3629000 /երեք միլիոն վեց հարյուր քսանինը հազար/	0 /զրո/	3629000 /երեք միլիոն վեց հարյուր քսանինը հազար/

6. «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի արձանագրության թիվ 3 որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեդիտեք» ՍՊԸ-ն:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի արձանագրության թիվ 3 որոշմամբ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեդիտեք» ՍՊԸ-ն:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2019թ. նիստի արձանագրության 1.3, 1.4 կետերով, ինպես նաև հավելված 1-ով արձանագրվել են «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի նկատմամբ որոշ անհամապատասխանություններ: Անհամապատասխանությունները մանրամասն նկարագրվել են: Նույն նիստի արձանագրության 1.5 կետով որոշում է կայացվել ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Նույն օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

9. «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2019թ. նիստի արձանագրության 1.3, 1.4 կետերով, ինպես նաև հավելված 1-ով արձանագրվել են «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրի նկատմամբ որոշ անհամապատասխանություններ: Անհամապատասխանությունները մանրամասն նկարագրվել են: Նույն նիստի արձանագրության 1.5 կետով որոշում է կայացվել ծանուցել

մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագարված անհամապատասխանությունները: Նույն օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

10. «ԳՀԱՊԶԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ. նիստի արձանագրության 1.3 կետով սահմանվել է՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում 1-ին չափաբաժնի մասով շտկել է իր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ոչ:

11. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ. նիստի արձանագրության 1.4 կետով որոշում է կայացվել 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից հանդիսացող՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի հայտը մերժել և որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով, և «Խաչպար» ՍՊԸ-ին 3-րդ չափաբաժնի մասով: Հետագայում՝ 28.06.2019թ., «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի՝ 2-րդ չափաբաժնի մասով, և «Խաչպար» ՍՊԸ-ի՝ 3-րդ չափաբաժնի մասով որակավորման փաստաթղթերի համապատասխանությունը հիմք ընդունելով հանձնաժողովը վերջիններիս ճանաչել է ընտրված:

12. Սույն թվականի հունիսի 25-ին Ընթացակարգի մասնակից հանդիսացող՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից գրավոր պահանջվել են ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակցի՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի տեխնիկական բնութագրերը: Նույն օրը բոլոր պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով տրամադրվել են պահանջ ներկայացրած մասնակցին:

1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 19.06.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները և «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումները ներկայացված են կից:

Գնահատող հանձնաժողովն, ուսումնասիրելով «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումները, եկել է այն եզրահանգման, որ 1-ին չափաբաժնի մասով, թվով 22 արձանագրված անհամապատասխանություններից 18-ը հստակ շտկվել և

պարզաբանվել են մասնակցի կողմից, իսկ մնացած 4-ը չունեն կարևոր նշանակություն, իսկ կարևոր նշանակություն ունեցող չափորոշիչները դասվում են «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից շտկված թվով 18 չափորոշիչների ցանկին:

Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով արձանագրված երկուական անհամապատասխանություններն ունեն շատ կարևոր նշանակություն, որոնք ըստ էության չեն շտկվել «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից: Այսպես օրինակ՝ 2-րդ չափաբաժնի մասով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ Օկլյուզիոն ճնշման առնվազն 9 մակարդակ, մասնակցի կողմից գնման հայտով առաջարկվել է 3 մակարդակ: Որպես արձանագրված անհամապատասխանության շտկում մասնակիցը ներկայացրել է՝ «համապատասխանում է պահանջին» արտահայտությունը: Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ Պոմպի հոսքի արագությունը ոչ պակաս քան՝ 75մլ/րոպե, մասնակցի կողմից գնման հայտով առաջարկվել է 50մլ/րոպե: Որպես արձանագրված անհամապատասխանության շտկում մասնակիցը ներկայացրել է՝ «մեր առաջարկված մոդելը ունի այս չափորոշիչը» արտահայտությունը:

Այսպիսով, «Մեդիտեք» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունների նկատմամբ դրսևորել է նեղ մասնագիտական մոտեցում, ինչի հետևանքով վերջինիս կողմից ներկայացված շտկումները համարվել են ընդունելի, իսկ առաջարկած սարքավորումը՝ համարժեք այն կարիքին, որի համար կատարվել է տվյալ գնումը: Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով արձանագրված անհամապատասխանությունների շտկման անհնարինության դեպքում, մասնակիցը հնարավորություն ուներ փոխելու առաջարկված սարքավորումների մոդելները համապատասխանեցնելով դրանք հրավերով սահմանված պահանջներին, ինչը վերջինիս կողմից չի կատարվել:

Պատվիրատուն վկայակոչել է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը:

Հաշվի առնելով ներկայացված պարզաբանումները և փաստարկները Պատվիրատուն առաջարկել է բողոքի քննության ժամանակ նշված հանգամանքները դարձնել

քննարկման առարկայի առանցք, ինչը Պատվիրատուի համոզմամբ հիմք կհանդիսանա ներկայացված բողոքի հիմքերի մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեդիտեք» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Մասնակից):

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն Ընթացակարգի մի շարք, այդ թվում նաև 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Մասնակիցը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով շտկել է իր կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները հրավերի պահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության համաձայն՝ Մասնակիցը ճանաչվել է ընտրված Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 01.07.2019թ. ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 08.07.2019թ. թիվ 09/794 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի

«զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԳՀԱՊԶԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերի տեխնիկական բնութագրով 1-ին չափաբաժնի՝ «Հիվանդների կարդիոմոնիտորինգային համակարգ» գնման առարկայի համար մի շարք հատկանիշների հետ մեկտեղ նախատեսվել են նաև հետևյալ տեխնիկական հատկանիշները.

<p>Մեկ հապաղումը / ուշացումը՝ ≤20mS Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ ԷՍԳ (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP, CO2 CF Մարտկոց՝ վերայիցքավորվող 3.6A/Hr 7.4V Li կամ համարժեք մարտկոց</p>
--

Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝ ~ 5MΩ
Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ ±300mV
Միջին արտահոսք՝ <10μA
Բազային վերականգնում՝ <3վրկ. դեֆիբրիլյացիայից հետո
Հիմնական իմպեդանսի տիրույթ՝ 0.1 ~ 2.5 kΩ
Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝ 1,2,3,4,5,10,15,30,60,90,120,180,240,480,760 Min
Երեխաների ռեժիմում՝
 SYS: 40 ~270mmHg
 DIA: 10~150mmHg
 MEAN: 20~165mmHg
Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.
Հստակություն՝ ± 2 bpm
Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.
Ժամանակի միջինացված հաստատունը՝ <10վրկ.
Մակնշում՝ ART, PA0000CVP, RAP, LAP, ICP, P1, P2
Չափման և ահազանգման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ ART: -50~350mmHg
Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.
Չափման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ CO2: 0~150mmHg
 INSCO2: 0~150mmHg
Հստակությունը՝ ±2mmHg, 0~40mmHg
Կողմնային հոսքի ուղացման ժամանակը՝ ոչ ավել, քան 2~3վրկ.
Ազդանշանային տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝
 CO2: 0~150mmHg
 INSCO2: 0~150mmHg
Շնչարգելության ազդանշանի ուղացումը՝ Ոչ ավել, քան՝ AwRR: 10~60վրկ

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մեդիտեք» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի մի շարք, այդ թվում նաև 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ: Գնահատող հանձնաժողովը նշել է, որ Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում չեն հստակեցվել այն տեխնիկական չափորոշիչները, որոնց համար հրավերով սահմանվել էին տիրույթներ՝ «պետք է լինի», «ոչ ավել, քան», «ոչ պակաս, քան», «առնվազն»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից ներկայացվել են կոնկրետ ապրանքային նշաններ,

արտադրողների անվանումներ և ծագման երկրներ, ուստի դրանք պետք է ունենան հստակ և հրավերով սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանող չափորոշիչներ, որոնց ճշգրտությունը հիմք ընդունելով կնքվում է գնման պայմանագիրը:

Մասնակցի կողմից հավելված թիվ 6.2-ով ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Պահանջվող տեխնիկական բնութագրիչ՝	Մասնակցի ներկայացված բնութագրիչ	կողմից տեխնիկական	Օգտագործողի ձեռնարկում նշված տեխնիկական բնութագրիչ
Մեկ հապաղումը / ուշացումը՝ $\leq 20\text{mS}$	Մեկ հապաղումը / ուշացումը՝ $\leq 20\text{mS}$		-----
Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ EUC (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP, CO2 CF	Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ EUC (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP, CO2 CF		Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ EUC (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP-CF CO2-BF
Մարտկոց՝ վերալիցքավորվող 3.6A/Hr 7.4V Li կամ համարժեք մարտկոց	Մարտկոց՝ վերալիցքավորվող 3.6A/Hr 7.4V Li		Մարտկոց՝ վերալիցքավորվող 2.5A/Hr 11.1V Li-ion
Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝ $\sim 5\text{M}\Omega$	Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝ $> 5\text{M}\Omega$		-----
Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ $\pm 300\text{Mv}$	Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ $\pm 500\text{Mv}$		Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ 500Mv
Միջին արտահոսք՝ <10uA	Միջին արտահոսք՝ <1uA		-----
Բազային վերականգնում՝ <3վրկ. դեֆիբրիլյացիայից հետո	Բազային վերականգնում՝ <5վրկ. դեֆիբրիլյացիայից հետո		Բազային վերականգնում՝ <5վրկ. դեֆիբրիլյացիայից հետո
Հիմնական իմպեդանսի տիրույթ՝ 0.1 ~ 2.5 kΩ	Հիմնական իմպեդանսի տիրույթ՝ 0.2 ~ 2.5 kΩ		-----
Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝ 1, 2, 3, 4, 5, 10, 15, 30, 60, 90, 120, 180, 240, 480, 760 Min	Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝ 1, 2, 2.5, 3, 5, 10, 15, 30, 60, 90, 120, 180, 240, 480 Min		-----
Երեխաների ռեժիմում՝ SYS: 40 ~270mmHg DIA: 10~150mmHg MEAN: 20~165mmHg	Երեխաների ռեժիմում՝ SYS: 25 ~240mmHg DIA: 10~200mmHg MEAN: 15~215mmHg		-----
Ակտուալիզացիայի ինտերվալ՝ մոտ 1վրկ.	Ակտուալիզացիայի ինտերվալ՝ մոտ 1վրկ.		-----
Հստակություն՝ $\pm 2 \text{ bpm}$	Հստակություն՝ $\pm 3 \text{ bpm}$		Հստակություն՝ $\pm 3 \text{ bpm}$
Ակտուալիզացիայի ինտերվալ՝ մոտ 1վրկ.	Ակտուալիզացիայի ինտերվալ՝ մոտ 1վրկ.		-----

Ժամանակի միջինացված հաստատունը՝ <10վրկ.	Ժամանակի միջինացված հաստատունը՝ <10վրկ.	-----
Մակնշում՝ ART, PA0000CVP, RAP, LAP, ICP, P1, P2	Մակնշում՝ ART	-----
Չափման և ահազանգման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ ART: -50~350mmHg	Չափման և ահազանգման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ ART: -50~300mmHg	Չափման և ահազանգման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ ART: -50~300mmHg
Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.	Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.	-----
Չափման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ CO2: 0~150mmHg INSCO2: 0~150mmHg	Չափման տիրույթը՝ CO2: 0~20%mmHg INSCO2: 0~20%mmHg	-----
Հստակությունը՝ ± 2 mmHg, 0~40mmHg	Հստակությունը՝ $\pm 0,1\%$ -0,5% mmHg, 0~40mmHg $\pm 0,3\%$	-----
Կողմնային հոսքի ուղացման ժամանակը՝ ոչ ավել, քան 2~3 վրկ.	Կողմնային հոսքի ուղացման ժամանակը՝ ոչ ավել, քան 5.5 վրկ.	-----
Ազդանշանային տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ CO2: 0~150mmHg INSCO2: 0~150mmHg	Ազդանշանային տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ CO2: 0~99mmHg INSCO2: 0~99mmHg	
Շնչարգելության ազդանշանի ուղացումը՝ Ոչ ավել, քան՝ AwRR: 10~60 վրկ	Շնչարգելության ազդանշանի ուղացումը՝ Ոչ ավել, քան՝ AwRR: 10~40 վրկ	

«Մեդիտեք» ՍՊԸ-ն Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով շտկել է իր կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները հրավերի պահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության համաձայն՝ Մասնակիցը ճանաչվել է ընտրված Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Այսպիսով՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից որպես առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացվել է հետևյալը հիմնավորումը.

Պահանջվող տեխնիկական բնութագրիչ՝	Մասնակցի ներկայացված տեխնիկական բնութագրիչ	Օգտագործողի ձեռնարկում նշված տեխնիկական բնութագրիչ	Մեկնաբանություն
Մեկ հապաղումը / ուշացումը՝ $\leq 20\text{mS}$	Մեկ հապաղումը / ուշացումը՝ $\leq 20\text{mS}$	-----	Համապատասխանում է պահանջին
Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ ԷՍԳ (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP, CO2 CF	Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ ԷՍԳ (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP, CO2 CF	Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝ ԷՍԳ (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP-CF CO2-BF	CO2-BF է, քանի որ համապատասխանում Հակա-էլեկտրոշոկային անվտանգության պահանջներին: CO2 չափումը որևէ կերպ չի առնչվում սրտի հետ
Մարտկոց՝ վերալիցքավորվող 3.6A/Hr 7.4V Li կամ համարժեք մարտկոց	Մարտկոց՝ վերալիցքավորվող 3.6A/Hr 7.4V Li	Մարտկոց՝ վերալիցքավորվող 2.5A/Hr 11.1V Li-ion	2500mAh (5000mAh optional) 11.1V Li-ion Մատակարարվելու է 5000 mAh
Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝ $\sim 5\text{M}\Omega$	Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝ $> 5\text{M}\Omega$	-----	Տվյալ պարամետրի արժեքը կախված է էլեկտրոդների վրա եղած շեղումներից $\pm 300\text{mV}$ և բոլոր դեպքերում չպետք է պակաս լինի $5\text{M}\Omega$ -ից: Դա ստանդարտների պահանջն է:
Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ $\pm 300\text{mV}$	Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ $\pm 500\text{mV}$	Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝ 500mV	Ձեռնարկում նշված արժեքը վերաբերում է բազային գծից շեղումը, որը կարող է լինել \pm
Միջին արտահոսք՝ $< 10\mu\text{A}$	Միջին արտահոսք՝ $< 1\mu\text{A}$	-----	$< 1\mu\text{A}$ 10 անգամ փոքր է պահանջված $< 10\mu\text{A}$ անհամապատասխանություն չկա
Բազային վերականգնում՝ $< 3\text{վրկ.}$ դեֆիբրիլյացիայից հետո	Բազային վերականգնում՝ $< 5\text{վրկ.}$ դեֆիբրիլյացիայից հետո	Բազային վերականգնում՝ $< 5\text{վրկ.}$ դեֆիբրիլյացիայից հետո	Բազային գծի վերականգնման առավելագույն տևողությունը 5վրկ. Պակաս է կախված դեֆիբրիլյացիայի ռեժիմներից
Հիմնական իմպեդանսի տիրույթ՝	Հիմնական իմպեդանսի տիրույթ՝ $0.2 \sim 2.5 \text{ k}\Omega$	-----	$0.2 \sim 2.5 \text{ k}\Omega$ նշված է $1 \text{ k}\Omega$ դիմադրություն

0.1 ~ 2.5 kΩ			ունեցող ԷՍԳ մալուխ օգտագործելու դեպքի համար
Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝ 1, 2, 3, 4, 5, 10, 15, 30, 60, 90, 120, 180, 240, 480, 760 Min	Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝ 1, 2, 2.5, 3, 5, 10, 15, 30, 60, 90, 120, 180, 240, 480 Min	-----	Չափման ինտերվալը AUTO ռեժիմում 1, 2, 2.5, 3, 5, 10, 15, 30, 60, 90, 120, 180, 240, 480 Min են
Երեխաների ռեժիմում՝ SYS: 40 ~270mmHg DIA: 10~150mmHg MEAN: 20~165mmHg	Երեխաների ռեժիմում՝ SYS: 25 ~240mmHg DIA: 10~200mmHg MEAN: 15~215mmHg	-----	Ռեժիմները համարժեք են
Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.	Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.	-----	Ինտերվալն ավել չի հստակեցվում, քանի որ կախված է չափումների միջինացման աստիճանի ընտրության հետ: Ընդհանրապես գտնվում է 1-2 վրկ տիրույթում
Հստակություն՝ ± 2 bpm	Հստակություն՝ ± 3 bpm	Հստակություն՝ ± 3 bpm	Համապատասխանում է պահանջին
Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.	Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.	-----	Ինտերվալն ավել չի հստակեցվում, քանի որ կախված է չափումների միջինացման աստիճանի ընտրության հետ: Ընդհանրապես գտնվում է 1-2 վրկ տիրույթում
Ժամանակի միջինացված հաստատունը՝ <10վրկ.	Ժամանակի միջինացված հաստատունը՝ <10վրկ.	-----	Համապատասխանում է պահանջին
Մակնշում՝ ART, PA0000CVP, RAP, LAP, ICP, P1, P2	Մակնշում՝ ART	-----	Պահանջում նշված չէ բոլոր թվարկված մակնշումների միաժամանակ բավարարելը: Ընդհանրապես օգտվում են դրանցից որևէ մեկից, քանի որ համարժեք են և համապատասխանում

			են միջազգային ստանդարտներին
Չափման և ահազանգման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ ART: - 50~350mmHg	Չափման և ահազանգման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ ART: -50~300mmHg	Չափման և ահազանգման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ ART: - 50~300mmHg	Ահազանգման տիրույթը նշված է 50~300mmHg
Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.	Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.	-----	Ինտերվալն ավել չի հստակեցվում, քանի որ կախված է չափումների միջինացման աստիճանի ընտրության հետ: Ընդհանրապես գտնվում է 1-2 վրկ տիրույթում
Չափման տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ CO2: 0~150mmHg INSCO2: 0~150mmHg	Չափման տիրույթը՝ CO2: 0~20%mmHg INSCO2: 0~20%mmHg	-----	Մթնոլորտային ճնշման 760 mmHg 0~20%mmHg համապատասխանում է : 0~150mmHg
Հստակությունը՝ ± 2 mmHg, 0~40mmHg	Հստակությունը՝ $\pm 0,1\%$ - 0,5% mmHg, 0~40mmHg $\pm 0,3\%$	-----	Մթնոլորտային ճնշման 760 mmHg $\pm 0,1\%$ համապատասխանում է ± 0.76 mmHg $\pm 0.3\%$ mmHg $\pm 2.28\%$ mmHg
Կողմնային հոսքի ուշացման ժամանակը՝ ոչ ավել, քան 2~3 վրկ.	Կողմնային հոսքի ուշացման ժամանակը՝ ոչ ավել, քան 5.5 վրկ.	-----	Կողմնային հոսքի ուշացման ժամանակը՝ ոչ ավել, քան 5.5 վրկ.
Ազդանշանային տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ CO2: 0~150mmHg INSCO2: 0~150mmHg	Ազդանշանային տիրույթը՝ Ոչ պակաս, քան՝ CO2: 0~99mmHg INSCO2: 0~99mmHg		Ազդանշանային տիրույթը հետևյալն է՝ CO2: 0~99mmHg INSCO2: 0~99mmHg
Շնչարգելության ազդանշանի ուշացումը՝ Ոչ ավել, քան՝ AwRR: 10~60 վրկ	Շնչարգելության ազդանշանի ուշացումը՝ Ոչ ավել, քան՝ AwRR: 10~40 վրկ		Անհամապատասխանություն չկա 10~40վրկ ավել չէ 10~60վրկ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և

վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով 1-ին չափաբաժնի գնման առարկայի համար Պատվիրատուի կարիքին համապատասխան սահմանվել է հստակ հատկանիշներ:

Ուսումնասիրելով «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերոհիշյալ տեխնիկական բնութագիրը՝ ներառյալ որպես շտկում ներկայացված հիմնավորումը, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ընդունել է Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը և համարել է այն համապատասխան հրավերի պահանջներին, այնուամենայնիվ նշված տեխնիկական բնութագրի և հրավերով սահմանված գնման առարկայի համար նախատեսված տեխնիկական բնութագրի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ մի շարք պարամետրերով Մասնակցի կողմից առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված հատկանիշներին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն փաստացի չի շտկել ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Ար. Մեդ.տեխնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 01.07.2019թ. ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգը բավարարել. պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Մեդիտեք» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ